

ԲԱՆԱՍՔԻ

¶ Ինչ ԴԵՍԻ Բազմավկի ներկայ պրակն սուրբհանգակին յանձնելու վրայ Էնքը, խմբա- գրութեանս հասաւ լզղուազէտ Պ. Կ. Յ. Բ. Բասմաջեանի Բանասէր հանդէսը. որուն վը- բայ կը փութանց ծանօթութիւն մի տալ:

Բահասէրի ներկայ Ա. գիրքը կը բավկա-
նայ 96 միջաղիր էջերէ, վիմագրեալ ընտիր
թղթոյ վրայ. զրութիւնն որոշ է, և ընթեանլի:

Հատորին զիմաւոր յօդուածներն են Հնաւ-
խօսական, Պատմական, Լեզուաբանական և
Քննական ուսումնամիբութիւնը՝ որոնց նորու-
թիւնը կը համարուին:

Հմտալից են մի քանի յօպուածք, մանաւանդ Հնախօսականը, առաջին յօպուածով Բանասիրի յարզ. Խմբագրապետ կը ցննէ Արեմենեան արցայից արձանագրութեանց այն մի քանի մասերն՝ ուր Պարեհ Ա. կը յիշէ իր նուաճած երկիրները, յորս կը գանուի նաև մեր աշխարհը Հայոստան: Յօպուածին առաջին Էջերուն մէջ, երկրորդ անգամ և կը ստուգաբանէ Արմենիա և Ալարատ յատուկ անուններն, զորս առաջին անգամ հմտութեամբ ուսումնասիրեց Բագմավկիփի այս տարրուան առաջին պրակներուն մէջ: Ըստ բանասիրիս ուսումնասիրութեան, Քրիստոսի 520 Թռականէն առաջ, Հայերը կը կոչուեին

Հ Հ Ա Յ Ո Վ Ո Վ [Մանաւայ] որ
է ըստ Մանաւացիք = բնակիչք Մինսի-ի
(Կ), և

፳ ዓመት ከተማ በተ-ቤት ስ-ቤት

որ թարգմանի՛ Արքարտացիք = Արքարտահանք, և Բանասկը՝ իւր այս կարծեաց իբր գորաւոր փաստ կը գրէ « . . . Արշակուն ձեր գործածուած է հոն՝ (Փարեհի արձանագրութեանց Բարելինսեան բնագրին մէջ) նոյն արձանագրութեանց պարսկական և շօշական բնագիրներու մէջ յիշուած Արմին

կամ Հարսիկնենիյա երկիրը նշանակիլու համար»։ Գալով Արևենիյա բատին ծագման, կը կարծէ թէ Արքենենեաց տիրապետութեան ժամանակ, պարսիկ պաշտօնատանց մէջ Արքարատ և Միենի անսուններն իրարու հետ միանալով. այսինքն Ար(արտ) Մին(ն) = Արմին առաջ եկած ըլլայ. Բանասէրը հաւանական տեսնելով այս կարծիքն, չընդունիր այն մեկութիւնը թէ Արքենիան ծագած լինի երբ. Դո (հար = «լիու և Շամ մին-նի) = բառերուն միանալին (Հար + միննի = Հարմինի = Արմին). Պ. Բասմանշեան քան և աւելի Էջերու մէջ կը ներկայացընէ քենուազիր արձանազրութիւնը և անոնց թարգմանութիւնը, ուսկից ընթերցողն կը տեղեկանայ թէ Գիտքեց քանի՞ անզամ, և Բնչչպէս արշաւեր է զես ի Հայու. Արձանագրութեանց հինգ օրինակներն որ զանազան երկիրներու մէջ կը գտնուին, անոնց երկրորդին (ի Պերսավոյիս) և երրորդին (ի Նարց Ծուստամի) ամբողջութեան մէջ կը յիշուի նաև երկիրն Արմինա, որ է Հայաստան

Հմմատ. Բանասէր էջ 20, 22, 26, 26, 27,
30, 32, 34, 37). որ ուրիշ շատ մը եր-
կիրսներու հետ Դարեհէլու նուանձնալ էր: Բա-
նասէրի Ա. հատորին կիսոյն մէջ բովանդա-
կուած է Պ. Բասմանչեանի յիշեալ ուշագրաւ
յօդուածն, որուն կը յաջորդէ «Մենաստան
Մանուկի» վերնագրով համառուս յօդուած
մը, Թարգմանեալ Պ. Գասպարտի Յօնցունակ
քելետաւ անուամբ գրքն «Մենաստանին եկե-
ղեցին Քաֆայէն 1475ին գէպ ի Պօլիս գտղ-
թած հայերն, Սովորն Մէհմէտէն ընդուներ
են և անոր համար այժմ նոյն տաճարը կոչի
«Քէփէլի մէնջիդի» = Քաֆացոց աղօրարան.
յօդուածն՝ թէ նոյն մենաստանին ի թէ նորա
հետ առնչութիւն ունեցող քաֆացի հայոց
վրայ պատմական և հնախօսական ամիսի
տեղեկալիմիններ կու տայ: Աղյուսելով երրորդ
յօդուածին, համառուս տեղեկութիւն կ'առ-
նումը վրացոց իշխանութեան տաեն վրա-
հայոց վիճակին. վրայ. սոյն յօդուածին հե-
ղինակը Պրոփ. Ա. Խախիանօֆ, կը յայտնէ

թէ ըստ արդի լեզուագէտ և մարդարան բար-
նասիրաց, Հայերը և Վլացիները միևնույն
նահապետական սերնդէ (Փորգումի որդիներէն,
Առ և Կարմէլու եղբայրներէն) չեն ծագած.
վասն զի թէ՛ բնական կազմութեամբ և թէ՛
լեզուարանական տեսակետով, իրարմէ կ'որո-
շուին. (Հմտ. Բանասէր Ա. Էջ 58):

Բանասէրի մէջ Պ. Հ. Աճառան և
ունեցեր է իւր բաժինը, ներկայացընելով իրը
նմոյշ մը «Թուարանական հաշուով Հայե-
րնի ներդաշնակովմեան աստիճանը»: Պ.
Բասմաջեանի այս առաջին զրքէն պակաս
չէ նաև տեղագրական համառօտ յօկուած
մը, որով կեղծանուն (Կայծոսիկ) որ, կը
նկարագրէ Տէրսիմը և նորա բնակչաց մար-
դարանական և բարոյական վիճակը: Պ.
Բասմաջեան ըստ իւր կանփիկ խոստան,
սկսած է անդրանիկի թիրթէն՝ Հրատարակել
Փարիզու ազգային մատենագրարանին Հայե-
րէն ձեռագրաց ցուցակը. Ներկայ պրակով
կը նկարագրէ Ա. ԺԲ-ԺԲ դարու ժամանա-
կին կարծուած Աստուածաշունչ մը, որուն
գրիշը, տեղը, և տէրը անյայտ է յիշա-
տակագրութենէ իսկ զուրկ: — Բ. Աղամո-
սարան մը ԺԻ-ԺԻ զարու. Գրիշ Ներսէս
երէց, իսկ Տեղին և Տէրը անյայտ:

Սուցիսա Վ. Պարոնեան որ ազգային ներ-
կայ բանասիրաց մէջ հմտագրյներէն մին
կ'ընդունուի, նա ևս իւր բազմամեայ արդիւ-
նաւոր մտցի գանձարանը Բանասէրի առջէ
բարեհաճած է բանալու, ուսումնակրութեան
նիթ առած է մեր հոչակաւոր Պատմիչ Հօր
պատմութիւնը՝ ներկայացընել ուղղագրեալ և
ծանօթարաններ, յարգելի հեղինակը կ'իմա-
ցընէ թէ Խորենացւոյ նոյն պատմութեան ա-
ռաջնակ օրինակն ալ խանգարուած ընջօրի-
նակութիւն մի եղած է և օրինակուած Պատ-
մահօր ինընագըր գուարընթեռնի հնացեալ
բնագրին վրայ:

Յարզ. Պարոնեան վարդապետի առաջին
նպատակն է Մ. Խորենացւոյ պատմութեան
ծանօթ այլ և այլ օրինակներուն համեմատ
ուղղագրել Ազգիս պատմահօր գրիցն. և եր-
կրորդ նպատակը կը թողարմէ որ ինըն
յարզ. հեղինակն ըսէ. «Խորենացւոյ պատ-
մութեան լուսաբանութեամբը լուծամն տալ,

այն բազմաթիւ գժուարութեանց, որ առիթ
առած են թէ ազգային և թէ օտարազգի
բանասիրաց մեր այս հինգերորդ զարու նշա-
նաւոր մատենագրին վրայ այլ ընդ այլոյ և
անտերիլ (ածականց անսայթաց են) և մինչև
անզամ անհեթեթ կոչուելու (և շատ իրաւամբ)
չափ կարծիս յառաջ բերել, սկսեալիւր պարած
ժամանակին կամ զարուն նկատմամբ, իւր
մատենագրութեան վրայ իրբի պատմի և իւր
ուղարկուի վրայ իրբի նշանարիտ հայրենասէր»:

Բանասէրի ներկայ անդրանիկ պրակին
վրայ՝ ամփոփելով մեր վերոյպրեալ համառօտ
ծանօթութիւններն՝ ի վերջոյ կը չնորհաւու-
րենց նորա հեղինակը որ յաշողեր է եթէ
ոչ վիպասիրի կամ պատմասիրի, այլ գոնէ
ամէն մի հայ բանասիրի համակրելի ներ-
կայացընել իւր ներթն: Պ. Բասմաջեան
թող շարունակէ իւր ձեռնարկը, այն ատեն
հայ պատմութեան մէջ պիտի թողու գրական
յաղթանակի յիշատակը. շատ միամիտ կը
գտնենց այն ամէն անհատներն՝ որոնց աւե-
լորդ համարեր են Բանասէրի երեսւմը, կար-
ծելով թէ մի ցանի բանասիրական հանդէս-
ներն՝ բաւական են ազգային պատմութիւնը
ու հնամիթիւնն լուսաբանելու և մշակելու: Ոչ
այլպէս, հայ լեզուի և պատմութեան գի-
տութիւնը շատ ընդարձակ և տակաւին (եթէ
ներուի ըսկու) շատ անմշակ լինելով, աւե-
լորդ չէ Բանասէրի աշխացութիւնը: Պ. Բաս-
մաջեանի արգի գաղթական վայրը՝ լինելով
լեզուաբանական և հնախօսական զիտու-
թեանց իրական վառարան մը, նա աւելի դի-
րան միջոց պիտի ունենայ հզզրիս նոր ուսում-
նասիրութեամբ լուսաբանելու հայ գրականու-
թեանց իրարերեալ լեզուաբանական հնախօ-
սական, աշխարհագրական, պատմական նիւ-
թերն, և գրչով պիտի կարենայ շօշափել այն-
պիսի հետազոտութիւններ, որը իրենց տե-
սակիւթով նորութիւն պիտի համարուին: Լաւ
և միիթարական է այս ամէն միայն կը մնայ
յարգելի լեզուագէտին մազթել յարատեռու-
թիւն և յաշողութիւն, որ ոչ միայն, իւր մտցի
ուղունութիւննին այլ և ազգային ուսումնատենչ
բարերարաց օգնութիւննին կը կախուի:

Հ. Ս. ԵՐԵՎ.